ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ «Մ. ՍԱՀԱԿ - Մ. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻԱՌ ՍՕՍ ՍԱՐԳՍԵԱՆ

Արդարեւ, այր երանեալ էք Դուք, սիրելի յոբելեար, որ երախտարժան Ձեր կեանքի 70-ամեան համազգային մեծարումով ու հանդիսութեամբ նշում է անկախացեալ մեր Հայրենիքում, եւ ինքնիշխան մեր պետութիւնն ու ժողովուրդն այսօր գնահատանքի, սիրոյ ու յարգանքի իր փուրքն է մատուցում Ձեզ:

Ցանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի եւ միաբանութեան, բերկրանօք սրտի ջերմօրէն շնորհաւորում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի փաղանդաշատ ու վաստակաւոր զաւակիդ:

Արժանաւոր մշակ հայ արուեստի.

Մտաւորականի բնատուր Ձեր կերտուածքով, շեշտուած ու խօսուն հայ նկարագրով Դուք հայ բեմարուեստի լաւագոյն դպրոցի ժառանգորդն ու շարունակողն էք: Տարիներ ի վեր Ձեր կերտած կերպարներով հայ բեմից ու էկրանից Դուք զրուցել էք հանդիսատեսի հետ, անարգել թափանցել նրա հոգու խորքերը եւ գերել Ձեր արուեստի անդիմադրելի զօրութեամբ: Ներշնչուն են Ձեր կատարումները, չեն զգում խօսքի կամ շարժման պակաս, քանզի պերճախօս են Ձեր հայեացքը եւ փիլիսոփայական խոհականութեամբ հնչող Ձեր ձայնը, որ դաջուած են յուսադրոշմ կնիքով բազմափորձ մեր ժողովրդի: Մարդկային անկրկնելի ներաշխարհը վեր հանելու ինքնօրինակ կարողութեամբ Դուք հասել էք այն բարձունքին, ուր արուեստագէտը միայն ինքն է, բայց երբեք միայնակ չէ:

Սիրելի յոբելեար. յիրաւի, սրբօրէն պահպանած մեծ ու գնահատելի ժառանգութիւն ունէք աւանդելու սերունդներին: Այդ ժառանգութեան մէջ ամենանուիրականն ու թանկը հայրենասիրութիւնն է, որով Դուք հաւատարմօրէն ծառայում էք մեր ժողովրդին եւ նրա հարուստ ու հնամեայ մշակոյթին: Հայրենեաց անձնուրաց նոյն նուիրումով այսօր հայաշունչ Ձեր ոգին, արուեստագէտի բազմամեայ Ձեր փորձն ու կա-

ղողութիւնը փոխանցում էք հայ թատրոնի եւ կինոյի երիտասարդ ջահակիրներին՝ հաւատաւոր Ձեր հայեացքն ուղղած հայոց գալիքին:

Անխոնջ Նահապետ հայ բեմարուեստի. բարձր գնահատելով Ձեր բազմարդիւն վաստակը հայ մշակոյթի անդաստանից ներս, Ձեր կեանքի յոբելեանական տարեդարձի առիթով Հայրապետական այսու Մեր Կոնդակով շնորհում ենք Ձեզ Հայ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ շքանշանը:

Առ Բարին Աստուած Մեր աղօթքն է, որ Տէրը Իր օրհնութեան ներքոյ բաջառողջ ու կորովաշատ պահի Ձեզ, պարգեւելով հոգու նոր սլացք եւ ստեղծագործական նորանոր յաջողութիւններ: Թող բարու, արդարի ու սիրոյ, իմաստութեան ու գեղեցիկի Ձեր արժեւորումներն արգասաւորուեն մարդկանց հոգիներում այսօր եւ առյաւէտ:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 19 Մայիսի
յամի Տեառն 2000 եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 8